ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հոկտեմբերի 17-ից 21-ը Նիդերլանդների Թագավորություն (ք. Մաաստրիխտ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Աշոտ Մուրադյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Նիդերլանդների Թագավորություն, ք. Մաաստրիխտ, հոկտեմբերի 17-ից 21-ը

4. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Համաշխարհային մաքսային կազմակերպության տեխնոլոգիական համաժողովի ընթացքում հնարավոր եղավ մասնակցել մաքսային ծառայությունների թվային փոխակերպման ընդլայնման, համաշխարհային առևտրի փոփոխվող լանդշաֆտի, մաքսային ծառայության կողմից ռոբոտների օգտագործման, արհեստական բանականության և մեքենայական ուսուցման ուժի օգտագործումը մաքսային ծառայությունների կողմից վտանգների ավտոմատ հայտնաբերման համար, նոր տեխնոլոգիաներով առևտրի բարելավման, նոր տեխնոլոգիական լուծումներով առևտրի խթանման վերաբերյալ հարցերի քննարկմանը, որոնք կարևոր են ներկայիս՝ տեխնիկայի և տեխնոլոգիաների զարգացման ժամանակաշրջանում:

6. Քննարկված թեմաները՝

Տեխնոլոգիական համաժողովն անց է կացվել «Գլոբալ առևտրի լանդշաֆտի փոփոխության պայմաններում մաքսային ծառայությունների արդյունավետության բարձրացումը տվյալների և տեխնոլոգիաների միջոցով» խորագրով, որի ընթացքում ներկայացվել և քննարկվել են մաքսային ոլորտում կիրառվող ժամանակակից տեխնոլոգիական լուծումների, այդ թվում՝ մաքսային մարմինների միջև տեղեկատվության փոխանակման, տվյալների վերլուծության, արհեստական բանականության և մեքենայական ուսուցման հետ կապված հարցեր և թեմաներ: Համաժողովին զուգահեռ անցկացվող ցուցահանդեսը հնարավորություն տվեց ծանոթանալ ոլորտում ներկայացվող նորագույն տեխնոլոգիական լուծումներին և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համաժողովը հանդիսացավ հարթակ, որտեղ հնարավորություն ստեղծվեց հանդիպել տարբեր երկրների մաքսային մարմինների և սահմանային այլ մարմինների գործընկերների, տեխնոլոգիաներ մատակարարողների, գործարար համայնքի և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև միջազգային առևտրի ասպարեզում ներգրավված այլ անձանց հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Համաժողովի ընթացքում կայացած քննարկումների և հանդիպումների արդյունքում քննարկվեց հետագա համագործակցության, փորձի փոխանակման հնարավորությունը, ինչը կարևոր է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում մաքսային ոլորտում կիրառվող տեխնոլոգիաների շարունակական զարգացման գործընթացի համար:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Տարբեր երկրների մաքսային մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ ձեռք են բերվել պայմանավորվածություններ հետագա համագործակցության, փորձի փոխանակման վերաբերյալ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

24.10.2022թ.